

Կ-877⁵-22.10.2015,03.11.2015-SՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-242-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի՝

- 1) 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել,
- 2) 3-րդ մասում «օրը» բառը փոխարինել «օրվան հաջորդող 181-րդ օրը» բառերով,
- 3) 4-րդ մասում «հաշվանցումներ (պակասեցումներ)» բառերը փոխարինել «պակասեցումներ» բառով,
- 4) 6-րդ մասի 2-րդ կետում «հաշվանցման սույն օրենքով սահմանված կարգով առաջացող՝ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց և (կամ) վերադարձման» բառերը փոխարինել «մուտքագրման միասնական հաշվին» և հանել վերջին պարբերությունում «, հաշվանցման» բառը:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ հոդվածի 5-րդ մասերը:

Հոդված 3. Օրենքի 4-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարների վերադարձը և (կամ) դրանց հաշվին պարտավորությունների պակասեցումը»:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին հոդվածով:

«Հոդված 5.1. Ապրանքների արտահանման դեպքում ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գումարների գծով առաջացած և կատարված հարկային պարտավորության գումարների՝ այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը կամ վերադարձը

1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն հաշվարկված և վճարված ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գումարները, ինչպես նաև արտահանման գործարքների մասով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարները ենթակա են հաշվանցման այլ հարկային պարտավորությունների դիմաց կամ վերադարձման՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկով հարկման ենթակա՝ արտահանված ապրանքների օտարման մասով ակցիզային հարկի գումարների՝ այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման համար օրենքով սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:»:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ապրանքների արտահանման գործարքների մասով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարների վերադարձը և (կամ) դրանց հաշվին պարտավորությունների, ինչպես նաև ապրանքների ներմուծման գործարքների մասով վճարված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարների պակասեցումը»,

2) 1-ին մասում «հաշվանցումը» բառը փոխարինել «պարտավորությունների պակասեցումը» բառերով,

3) 2-րդ մասում՝

ա. «հաշվանցման (պակասեցման)» բառերը փոխարինել «պակասեցման» բառով,

բ. հանել «այդ թվում՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում՝ հարկի լրացուցիչ գումարները,» բառերը,

գ. «ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկով» բառերը փոխարինել «ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 2-րդ և 4-րդ հոդվածների:

Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 2-րդ և 4-րդ հոդվածները ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքի 4-րդ հոդվածի գործողությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 2-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարված առաջարկությունների և փոփոխությունների

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է ՓՄՁ սուբյեկտների կողմից շահագործվող հին սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաները նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաներով փոխարինելու վերջնաժամկետը 2016 թվականի հունվարի 1-ի փոխարեն սահմանել 2017 թվականի հունվարի 1-ը:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է հարկ վճարողներին թույլ տալ շարունակել համարվել շրջանառության հարկ վճարող, եթե նրանց փոխկապակցված անձինք որևէ գործունեություն չեն իրականացրել:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: